

## Հայտարարություն

### Մարտակերտի շրջանի հանրակրթական դպրոցների ուսուցչի թափուր տեղեր 2017-2018ու. տարի

1. Թալիշի մ/դ - ֆիզիկա 10 ժամ, ինֆորմատիկա 5 ժամ, շախմատ 4 ժամ
2. Մոխրաթաղի մ/դ - ֆիզիկա 8 ժամ
3. Չլդրանի մ/դ-կերպարվեստ 5 ժամ, տեխնոլոգիա 4 ժամ, երգ 5 ժամ
4. Ճանկաթաղի մ/դ -կերպարվեստ 2 ժամ, երգ 2 ժամ
5. Նոր Սեյսուլանի մ/դ-քիմիա 10 ժամ
6. Գետավանի մ/դ – աշխարհագրություն 9 ժամ
7. Պողոսագոմերի մ/դ – տեխնոլոգիա 6 ժամ
8. Ծմակահողի հ/դ - աշխարհագրություն 4 ժամ, պատմություն 7 ժամ
9. Կարմիրավանի հ/դ - ֆիզիկա 4 ժամ, շախմատ 4 ժամ
10. Աղաբեկալանջի հ/դ - ֆիզիկա 4 ժամ
11. Գառնաքարի հ/դ - ֆիզիկա 3 ժամ, աշխարհագրություն 3 ժամ
12. Հայկաջուրի հ/դ - ֆիզիկա 6 ժամ

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ԼԴՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 2013թ. 25-26, առարկայական հարցաշարերը՝ 2014թ. 23-24 համարներում և տեղադրված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության [edu.nkr.am](http://edu.nkr.am) կայք էջում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է: (Ձև 1),

2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ԼԴՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն (Ձև 4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ԼԴՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 5-9-ը ընկած ժամանակահատվածում. մանրամասը տեղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց: